

ՈՂՋՈՒՅՆԻ ՄՐՏՅԴԻՆ ԽՈՍՔ ՍԶԴԻՑՑԻՆ-ԵԿԵՂԵՑՍԿԱՆ ԺՈՂՈՎՐԴ ՊԱՏԳԱՄՄՎՈՐՆԵՐԻՆ

Գերաշնորհ սրբազան եղբայրնե՛ր, Հոգե-
շնորհ և արժանապատիվ սուրբ Հայրե՛ր,
պատվարժան և մեծահարդ պատգամավոր-
նե՛ր Աղքային-եկեղեցական սրբագումար
ժողովի:

Այսօր, Հայրենի սուրբ Հոգի վրա, դարավոր
ու պատմական Ս. Էջմիածնի նվիրական այս
կամարների տակ, Հանդիսավոր իրադրու-
թյան մեջ, բացառիկ ուրախության պայման-
ներում և խանգավառ մթնոլորուում, իր աշ-
խատանքներն է սկսում Աղքային-եկեղեցա-
կան մեծ ժողովը՝ Հայաստանյայց Առաքելա-
կան և Սուրբ Եկեղեցու գերագույն օրենսդիր
ժարմինը, զբաղվելու առանձնապես Ամենայն
Հայոց Հայրապետի ընսրության, և ընդհան-
րապես՝ Հայաստանյայց Առաքելական եկե-
ղեցուն վերաբերյալ մի շարք կարևոր հար-
ցերով։

1955 թվի սեպտեմբերի 29-ին Ս. Էջմիա-
ծնում գումարված այս պատկառելի Աղքային-
եկեղեցական ժողովը բացառիկ և պատմա-
կան իրադրություն է Հանդիսանում մեր
եկեղեցական տարեգրության մեջ նրանով,
որ սա մի լրիվ համազգային ներկայացուց-
չական ժողով է, որին իրենց շնորհարեր
մասնակցությունն են բերել Հայաստանյայց
Առաքելական Սուրբ Եկեղեցու նվիրապե-
տական Աթոռների՝ Մեծի Տաճն Կիլիկիո Կա-
թողիկոսության պատգամավորությունը, Ե-
րրատեմի Մրրոց Հակոբյանց դարավոր միա-
բանության և Պատրիարքության ներկայա-
ցուցիչները, Մայր Հայրենիքի, Սովետական
Միության և Սփյուռքի մեր թիմերը, իրենց
եկեղեցական և աշխարհական պատգամա-
վորներով և Հավատացյալ ու Հայրենասեր
ուժուավորների մի պատկառելի խմբով, և մի
անգամ ևս արտահայտվում է Աղքային-եկե-
ղեցական այս սրբագումար ժողովի հա-

մազգային, Հայրենասիրական-եկեղեցական
միասնականությունն ու կուռ համախմբվա-
ծությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և մեր
պանծալի Սովետական Հայրենիքի շուրջ։

Համազգային-եկեղեցական այս ժողովին
չեն կարողացել անձամբ մասնակցել, դժ-
բախտաբար, Կոստանդնուպոլսի Հայոց
Պատրիարքությունը՝ վերջերս Թյուրքիայում
պատմած քաղաքական իրադրություն-
ների պատճառով և Հունաստանի ու Իրաքի
թեմերը։

Ուրախ ենք այսօր, որ Հայրենի աշխարհի,
Սովետական Միության և Սփյուռքի հեռա-
փոր ու մոտիկ թիմերից Մայր Աթոռ Ս. Էջ-
միածնի է ժամանել Ազգի և Ս. Եկեղեցու
անունից բնտրված եկեղեցական ու աշխար-
հական պատվիրակության մի պատճառելի
խոսմբ, որը սրբությամբ և պատվով կկատա-
րի իրեն վստահված պատասխանատու և
պատվավոր առաքելությունը։

Այս հանդիսավոր և խորհրդավոր պահին,
երբ բացվում է Աղքային-եկեղեցական մեծ
ու պատկառելի այս ժողովը, Մայր Աթոռի
գերագույն Հոգեոր Խորհրդի կողմից և Ս.
Էջմիածնի միաբանության անունից, քաղցր
պարտականություն ունեմ ողջունի սրտա-
գին խոսք ասելու մեր սիրելի և մեծահարդ
պատգամավորության։

Զեկ՝ ազնիվ պատգամավորներից Հայրենի
երկիր է բերել Հայրենիքի սերն ու կարուր,
Ս. Էջմիածնի անունն ու խորհուրդը։ Հա-
յաստանյայց Առաքելական եկեղեցու և
Հայ ժողովորի պատմության առանձնա-
հատկությունն է այդ՝ Հայրենասիրությունն
ու եկեղեցասիրությունը սերտ կապված
երեան բերել մեր աղքային-եկեղեցական
կյանքի կարևորագույն դեպքերի ժամանակ՝
Ս. Լուսավորչի օրերից մինչև այսօր։

Մեր նախնյաց և ներկա Սրբություն Սրբություն՝ հայ քրիստոնյա մարդու կուսու կորան Մայր Աթոռ Ս. էջմիածինը իր սրբություններով, մեր պանծալի, վերածնված Սովորական Հայութաւանը իր պատմական հուշարձաններով, որպիս մազնիսական ուժ, րերել են պատգամավորներից ու համախմբել էուսավորչի պատմական ու սուրբ այս Աթոռի շուրջ Հայրենիքի կարուան առնելու, ողջագուրվելու. Մայր Երկրի հայության հետ, ողեշնչվելու մեր անցյալ և ներկա հոյակապ հուշարձաններով և արձագանքելու նախնյաց սրտառուշ զբացմունքին. «Եկաւք շինեցուք սուրբ զինորանն լուսոյ»:

արժանապատվության և զգացմանց կենտրոնն ու խորհրդանշանը: «Ի վերայ Աջոյն և էջմիածնի ամենալի ազգն Հայոց կապեալ կան», — զրել է Առաքել Դավթիթեցին:

Հայրենասեր պատմիչը արտահայտած այդ գողարփիկ զգացմունքն է ահա, որ այսօր էլ բերել է Զիկ Մայր Աթոռ Ս. էջմիածին, որովհետև, այսօր էլ, այս նվիրական Աթոռի շուրջը համախմբված, ողջ հայության արժանավոր ներկայացուցիչների համար ևս Ս. էջմիածնը խորումն է հայ հոգու թոփշիքի, հավատքի, հայրենասիրության:

Վստահ ենք, որ այս հանդիսավոր պահին, բովանդակ հայության սիրոն ու միտքը թե-



Գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսը կարդում է ողջունի խոսքը

Մուրք էջմիածնի անունն ու խորհուրդը, Մայր Հայրենիքի գաղափարն ու լուսաշող իրականությունը նվիրական ու թանկ են եղել ամեն մի հավատացյալ և հայրենասեր հայ մարդու համար: Գանգիսի ափին թե նեղոսի հովտում, հյուախում թե հարավում ապրող ամեն մի հայ ազգային հպարտության ամենաանկեղծ ու վառ զբացմունքներով, իր հոգու բովանդակ ջերմությամբ կապված է եղել Ս. էջմիածնի և Հայրենիքի հետ:

Ս. էջմիածնին եղել է և է հայ ժողովորդի ազգային-եկեղեցական միասնականության, կրոնական ինքնագիտակցության, ազգային

վածում են այս նվիրական վայրերի շուրջ՝ Ս. էջմիածնի և Հայրենիքի շուրջ:

Սրտափին շնորհակալության և ողջունի շերժ խոսք ունեմ նաև քույր եկեղեցիների ներկայացուցիչներին՝ որոնք եկել են հաջողություններով, որպես մեր լավագույն ցանկություններով, որպեսզի արդյունավետ լինեն ժողովի աշխատանքները:

Խոշես գիտեք, 1954 թվի մայիսին, Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին կրեց մեծագույն վիշտը, երջանկահիշատակ և հավետ ողբացյալ Գեորգ Զ. հայրենասեր և մե-

ծագործ Կաթողիկոսի անդարմանելի մահով: Խնդրում եմ Ազգային-Եկեղեցական մեծ ժողովը պատգամավորներին հոտնկայս հարգել հիշատակը Հայրաստանյայց Առաքելական Եկեղեցու մեծ հայրապետների՝ հոգելույս Տ. Տ. Գեորգ Զ. Ամենայն Հայոց Հայրապետի, Մեծի Տան Կիլիկիո Հանգուցյալ Գարեգին Վեհի, Երուսաղեմի Հանգուցյալ Կյուրեղի Բ. Պատրիարքի, Եփրոպայի թեմի Հայրապետական պատվիրակ Տ. Արտավազդ արքեպիսկոպոսի և Գերագույն Հոգուոր Խորհրդի մահացած անդամների:

Գեորգ Զ.ի մահը արժանավոր և անկեղծ վշտով ողբաց բովանդակ հայ ժողովորդը և՝ Հայրենիքում և Սփյուռքում, որովհետև մեծ ու խորունկ էր Հայրաստանյայց Առաքելական Եկեղեցական կրոած վիշտը: Հայրաստանյայց Առաքելական Եկեղեցին Գեորգ Զ.ի մահով կորցնում էր իր մեծանուն և անձնուիր, առաքելաշավիդ Հայրապետին, հայ ժողովորդը՝ իր հայրենասեր և արժանավոր զավակին, իսկ Հայրենիքը՝ իր մեծ և հավատարիմ քաղաքացուն: Հանգուցյալը իր բարոյական և իմացական հազվագյուտ շնորհներով, իմաստուն ազգային-Եկեղեցական քաղաքականությամբ, իր հեռատես ու փորձված վարչապիտությամբ, մեր ազգային-Եկեղեցական պատմության վերջին հիսնամյակի ամենակարևորուն ու նվիրված, առաքելաշնորհ Եկեղեցականներից մեկն էր, որը կարողացավ բարձր պահել Ամենայն

Հայոց Ընդհանրական Հայրապետության գերագահ և բարձրագույն Հեղինակությունը, Մայր Աթոռի պատմական հմայքն ու նշանակությունը:

Հանգուցյալ Վեհափառի խնկելի հիշատակը նվիրական է մեզ բոլորիս համար:

Ուստինք հավատարիմ մնալ հանգուցյալ Վեհափառի դաշտանած և պաշտած Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միության և հայ ժողովորդի միասնականության գաղափարներին, գաղափարներ, որոնք մեզ ավանդ են մնացել մեր պանծալի նախնիքներից, Ս. Լուսավորչի օրերից մինչև Գեորգ Զ.ը, գաղափարներ՝ որոնցով ապրել, ստեղծագործել, գոյատել է մեր ժողովորդը և հասել այսօրվա խաղաղ նախաճանգիստը:

Ազգային-Եկեղեցական այս պատկառելի մեծ ժողովը խորապես ու արժանավոր կերպով հարգած կլինի Վեհափառի հիշատակը, եթե անվրեպ կենսագործի նրա ազգային-Եկեղեցական միասնության, Հայրենասիրության, Եկեղեցասիրության, Համերաշխության վեմ պատգամները:

Թույլ տվեք, Ազգային-Եկեղեցական մեծ ժողովի արժանահարգ և սիրելի պատգամավորներ, ողջունի այս շերմ ու անկեղծ խոսքերից հետո, բացված հայտարարել 1955 թվի սեպտեմբերի 29-ին Ս. էջմիածնում գոմարված Ազգային-Եկեղեցական այս մեծ ժողովը:

